ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

12 նոյեմբերի 2022 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 8 (ութ) անդամներ՝ Հակոբ Բալասյանը, Դանիել Դանիելյանը, Արփինե Սուքիասյանը, Էդիկ Պիճիկյանը, Արմեն Հայրապետյանը, Աննա Մկրտչյանը, Կարապետ Հարությունյանը և Վարդան Սուքիասյանը:

Բացակա էին ավագանու անդամներ՝ Վլադիմիր Վարդևանյանը, Ավագ Սահակյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանը, Արմեն Սարգսյանը, Լիանա Գևորգյանը և Վալենտինա Կաղիյանը:

Նիստին ներկա էին հրավիրված անձինք՝ Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչ Սամվել Սահակյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի հոգևոր սպասավոր Տեր Արսեն քահանա Համբարձումյանը, Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալ Նիկոլայ Աբրահամյանը, Բյուրեղավանի պատվավոր քաղաքացի Սիլվա Մուկոյանը, վաստակաշատ մանկավարժ Ջուլիետա Ասատրյանը, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներ, համայնքում գործող կազմակերպությունների ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Նիստը տեղի ունեցավ Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան շենքում (հասցեն՝ Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց):

<u>Ավագանու նիստը վարում էր ավագանու նիստին ներկա ավագանու տարիքով ավագ անդամ Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Լիլիթ Ավուշյանը նիստը վարող Հակոբ Բալասյանին փոխանցեց ավագանու անդամների գրանցման ցուցակը:

Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու նիստն իրավազոր է, քանի որ նիստին ներկա է ավագանու 8 անդամ՝ օրենքով սահմանված թվաքանակի կեսից ավելին:

Հակոբ Բալասյանը հայտարարեց նիստի բացման մասին:

Նիստը վարողը հայտարարեց նիստի հետևյալ օրակարգը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի երդում:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 12-ի նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի երդում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 61-Ա/

Ընտրված համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը՝ մոտենալով ամբիոնին, արտասանեց երդման տեքստը.

«Ստանձնելով Բյուրեղավան համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին:»:

Երդումն արտասանելուց հետո հնչեց Հայաստանի Հանրապետության օրհներգը:

Համայնքի ղեկավարը ստորագրեց երդման տեքստի տակ, որն ի պահ հանձնվեց համայնքապետարանին:

Կոտայքի թեմի հոգևոր սպասավոր Տեր Արսեն քահանա Համբարձումյանը ողջունեց բոլորին, շնորհավորեց համայնքի ղեկավարին և կարդաց տերունական աղոթք:

Ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը, որից հետո նա շարունակեց վարել նիստը:

Ողջույնի խոսքերով հանդես եկան վաստակաշատ մանկավարժ Ջուլիետա Ասատրյանը, Բյուրեղավանի պատվավոր քաղաքացի Սիլվա Մուկոյանը և համայնքի երիտասարդների անունից Բյուրեղավանի Երիտասարդների Մարզամշակութային Միության նախագահ Միքայել Խաչատրյանը:

Ողջույնի խոսքերից հետո համայնքի ղեկավարը հայտարարեց նիստը փակված:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ